ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» ապրիլի 2017 թվականի N 73-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով Ռաֆիկ Պողոսի Հովնանյանի ընտանիքի խնդրանքը, ***որոշում եմ.***

Ռաֆիկ Պողոսի Հովնանյանի ընտանիքին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի Մելքոնյան փողոցի 2-րդ փակուղու թիվ 44 հասցեից բաժանված S_1=193,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց, 2-րդ փակուղի թիվ 44/2 և S_2=563,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց, 2-րդ փակուղի, թիվ 44:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ.ապրիլի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» ապրիլի 2017 թվականի N 74-Ա

ԱՆՆԱ ԽՈՐԵՆԻ ՄՍՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժի 12-րդ փողոցի թիվ 32 տան բնակիչ Աննա Խորենի Մսրյանի ընտանիքի վերաբերյալ և հաշվի առնելով այն, որ ընտանիքը հինգ անձ է, ինքը և ամուսինը՝ Աշոտ Շոթայի Դավթյանը չեն աշխատում, ամուսնու հայրը՝ Շոթա Դավթյանը, թոշակառու է, նույնպես չի աշխատում, նրանց խնամքի տակ են երկու անչափահաս երեխաները՝ ծնված 2010 և 2014 թվականներին, ընդ որում աղջիկը՝ Միլենա Աշոտի Դավթյանը մանկուց հաշմանդամ է, ունի առողջական խնդիրներ կապված տեսողության հետ, գտնվում է բժիշկների հսկողության տակ, կարիք ունի երկարատև բուժման և ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով Աննա Խորենի Մսրյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

Հանձնարարել ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Աննա Խորենի Մսրյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. ապրիլի 20
գ. Ջրվեժ